

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Մշակվել է՝ համայնքի ղեկավարի և համայնքապետարանի
աշխատակիցների կողմից:
Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Լյուդվիկ Յայլոյանի կողմից:
Հաստատվել է՝ համայնքի ավագանու՝ 2019 թվականի փետրվարի 28-ի
N 09-Ն որոշմամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ
4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
5. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

խնայողաբար օգտագործելուց: Ուստի համայնքի ավագանին, համայնքապետարանի աշխատակիցները շահագրգիռ մոտեցում կցուցաբերեն համայնքի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղությամբ:

Խնդիրների լուծումը կարելի է իրականություն դարձնել համայնքի բյուջեի կառավարման, դրամաշնորհների, դոնոր կազմակերպությունների համագործակցության շնորհիվ:

Հնգամյա պլանը միտված է բարելավելու համայնքի բնակիչների արժանապատիվ կյանքը:

Հուսով եմ, որ համայնքի բնակիչներն անմասն չեն մնա և սատար կկանգնեն իրենց կողմից վստահություն ստացած իշխանությունը կրողին՝ համայնքի ղեկավարի, կյանքի կոչելու ծրագրի դրույթները, բարելավելու բնակչության կենսագործունեության միջավայրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Լ. ՅՍՅԼՈՅԱՆ

2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզ, Շահումյանի թ/Ֆ համայնք
Մարզկենտրոնը՝ Արմավիր



Շահումյանի թ/Ֆ համայնքի տեսլականը

Շահումյանի թ/Ֆ գյուղն ակտիվ կյանքով ապրող համայնք է, որտեղ առկա բոլոր սոցիալ-տնտեսական, կենցաղային, հոգևոր-մշակութային խնդիրները գտնում են իրենց լուծումը, և համայնքի յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի ակտիվորեն մասնակցելու համայնքում որոշումների կայացմանը և գործողությունների իրականացմանը, ինչպես նաև լրացնելու իր գիտելիքների, հմտությունների և փորձի պակասը:

2023 թվականին ունենալու ենք բնակավայր, որը լինելու է գեղեցիկ, բարեկարգ և բնակիչների համար ապահովելու է բավարար կենսապայմաններ:

2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շահումյանի թ/Ֆ գյուղական համայնքը գտնվում է Արմավիրի մարզի հյուսիս-արևելյան մասում, սահմանակից է Էջմիածին քաղաքային և Նորակերտ, Շահումյան գյուղական համայնքներին:

Մարզկենտրոնից գտնվում է 33 կմ հեռավորության վրա, Էջմիածին քաղաքից՝ 6 կմ : Շահումյանի թ/Ֆ տեղանունը առաջացել է խորհրդային ժամանակներում գյուղում գործող Շահումյանի թոչնաֆաբրիկայից: 1950-ական թվականների սկզբին համայնքի տարածքում սկսվել է թոչնաբուծական ֆաբրիկայի կառուցումը: 1953 թվականին ֆաբրիկան շահագործման է հանձնվել: Թոչնաբուծական ֆաբրիկայում աշխատելու նպատակով Հայաստանի և նախկին ԽՍՀՄ-ի տարբեր բնակավայրերից գյուղ են տեղափոխվել և հիմնական բնակություն հաստատել տարբեր տարիքի և զբաղմունքի անձինք:

2002 թվականին Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի կողմից թոչնաբուծական ֆաբրիկան լուծարվել և սնանկ է ճանաչվել : Տեղանունը ոչ մի անգամ չի վերանվանվել:

Գյուղը ծովի մակարդակից բարձր է 850 մետր: Վարչական տարածքը կազմում է 293.8 հա, որից տնամերձ՝ 38.7 հա: Աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ բարենպաստ: Համայնքի կլիման չոր ցամաքային է, ցուրտ, սակավաձյուն, պարզկա ձմեռներով ու շոգ, չորային ամառներով: Օդի ջերմաստիճանը ձմռանը տատանվում է -3-ից մինչև - 25 աստիճան ըստ Ցելսիուսի, ամռանը՝ 13-39 աստիճան: Տարվա եղանակներից համեմատաբար մեղմ է գարունը, ամառը տևական է՝ 4.5-5 ամիս: Տարեկան տեղումների քանակը կազմում է 200-250 մմ: Վերջին տարիներին նկատվում է տևական ձնածածկույթի սակավություն:

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2019թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշներ	Քանակ
1	Բնակչության առկա թվաքանակը / մարդ/	949
2	Տնային տնտեսությունների թվաքանակը	210
2.1	Այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում (վագոն, տնակ) բնակվող ընտանիքների քանակը	2

2.2	Կիսակառույց տներում բնակվող ընտանիքների քանակը	0
3	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	29

Համայնքի բնակչության 49,5 %-ը տղամարդիկ են, 50,4 %-ը՝ կանայք:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները

(01.01.2019թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	949	479	470
1.1.	մինչև 1 տարեկան	6	4	2
1.2.	1-2 տարեկան	8	4	4
1.3.	3-5 տարեկան	31	18	13
1.4.	6-9 տարեկան	41	17	24
1.5.	10-14 տարեկան	46	23	23
1.7.	15-17 տարեկան	28	10	18
1.8.	18 և ավելի տարեկան	785	407	378
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ՝ հաշմանդամներ), այդ թվում՝	92	61	31
2.1.	Հաշմանդամներ	28	15	13
2.2.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	2	0	2
2.3.	Հայրենական պատերազմի մասնակիցներ	0	0	0
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	2	2	0
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0	0	0
5.	Խնամակալության հանձնված երեխաներ	0	0	0
6.	Զբաղվածներ (հողագործությամբ)	91	39	52
7.	Գործազուրկներ	462	268	194
8.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքներ	29	13	16
9.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներ	0	0	0
10.	Փախստական ընտանիքներ	2	5	3

Համայնքում կա 693 աշխատունակ մարդ, որոնցից մշտական աշխատանք ունեն 231-ը: Գործազուրկների մեծամասնությունը կանայք են: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով: Չաշխատողները գործազուրկի կարգավիճակ չունեն, որովհետև գյուղական համայնքների բնակիչները հիմնականում հողի սեփականատերեր են:

Համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին համայնքապետարանի կողմից մատուցվում են սոցիալական ծառայություններ:

Համայնքի զբաղեցրած տարածքը

- Շահումյանի թ/ֆ համայնքի վարչական տարածքը՝ 293.78 հա
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 214.06 հա
- Բնակարանային նշանակության հողեր՝ 45.88 հա
- Արդյունաբերական հողեր՝ 28.64 հա
- Էներգետիկայի և տրանսպորտի հողեր՝ 3.31 հա
- Հատուկ պահպանվող հողեր՝ 0 հա
- Ջրային ֆոնդեր՝ 1.89 հա
- Այլ՝ 0 հա
- Բնակավայրի տարածքը՝ 48.1 հա
- Հողի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը՝ 203
- Մեկ հողաբաժնի չափը՝ մինչև 0.19 հա
- Շահումյանի թ/ֆ համայնքի սեփականություն համարվող հողեր՝ 177.84 հա

2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

- Շահումյանի թ/ֆ համայնքի 2019 թվականի ընդհանուր բյուջեն կազմում է 28196.1 հազար դրամ, 2018 թվականի ընդհանուր բյուջեն՝ 26428.5 հազար դրամ:
- Համայնքի բյուջեի մեջ համայնքի սեփական եկամուտը 2019 թվականին կազմում է 10% 2018 թվականին՝ 9% :
- Համայնքում հիմնականում զբաղվում են հողագործությամբ, անասնապահությամբ և թռչնապահությամբ:

Համայնքում զարգացած են գյուղատնտեսության հետևյալ ճյուղերը՝

- ❖ խաղողի այգիներ՝ տարեկան շուրջ 7.7 տոննա
- ❖ պտղատու այգիներ՝ տարեկան շուրջ 57 տոննա
- ❖ հացահատիկային կուլտուրա՝ տարեկան շուրջ 3.5 տոննա

Համայնքում հողերի սեփականաշնորհումից տարիներ անց բնակիչներն աստիճանաբար սկսեցին քիչ զբաղվել հողի մշակությամբ: Պատճառները տարբեր են՝ ոչ եկամտաբեր հողեր,

տրակտոր - մեխանիզմների բացակայություն, պարարտանյութերի գներ, ոռոգման ջրերի սակագին, սպառման բարդություններ, բնական աղետներ և այլն:

Գյուղատնտեսական արտադրանքի վաճառքն իրականացվում է տեղում, գյուղմթերքների շուկայում և մթերող կազմակերպություններում:

Համայնքում հաշվառված են կենդանիների հետևյալ գլխաքանակները՝

- կով՝ 102 գլուխ
- ոչխար՝ 15 գլուխ
- խոզ՝ 284 գլուխ
- թռչուն՝ 2609 թև
- մեղվաընտանիք՝ 93 հատ

Արտավայրերի և խոտհարքների բացակայության պատճառով համայնքի բնակիչները անասնակեր ձեռք են բերում այլ տարածաշրջաններից կամ սեփականաշնորհված հողամասերը օգտագործում են այդ նպատակներով:

Համայնքում գյուղատնտեսության զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում են իրականացնել հետևյալ խնդիրները՝

- 1) աջակցել գյուղացիական տնտեսություններին՝ ապահովելու ոռոգման ջրով,
- 2) կազմակերպել գյուղատնտեսական հողերի հաշվառում, փաստագրում, ինչպես նաև հատկացում՝ պայմանագրային հիմունքներով,
- 3) օգնել գյուղացիական տնտեսություններին՝ ձեռք բերելու թունաքիմիկատներ, սերմեր, վառելիք՝ շուկայականից ցածր գներով,
- 4) անասնապահության բնագավառում իրականացնել անասունների հաշվառում, պրոֆիլակտիկ բուժում, կազմակերպել հակահամաճարակային միջոցառումներ:

Համայնքում չկան զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ:

Համայնքը չունի դպրոց, մանկապարտեզ, արտադպրոցական որևէ կրթական հաստատություն:

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավարն ընտրվել է 2018 թվականի հոկտեմբերի 27-ին: Համայնքի ավագանին բաղկացած է 3 անդամից: Համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 11 աշխատակիցներից՝ հետևյալ կառուցվածքով.

1. Համայնքի ղեկավար՝ 1
2. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ 1
3. Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ՝ 4
4. Տեխնիկական և սպասարկող անձնակազմ՝ 5

Վերջին տարիներին նկատվել է որոշակի դրական տեղաշարժ համայնքապետարանի և բնակիչների փոխհարաբերություններում: Համայնքապետարանի գործունեության մասին բնակիչներին իրազեկելու լավագույն տարբերակը համայնքապետարանի պաշտոնական կայքն է, որտեղ առկա տեղեկատվությունը հասանելի է յուրաքանչյուրին: Կայքում տեղադրվում են հայտարարությունները, համայնքային նորությունները, ընտանեկան նպաստ ստացողների ցուցակները:

Ինտերնետային կայքը հնարավորություն է տալիս համայնքի բնակչության հետ բաց երկխոսության միջոցով համատեղ ուժերով լուծելու համայնքում առկա հիմնախնդիրները: Կայքի վերաբերյալ բնակչության կարծիքներն ու առաջարկությունները նկատի առնելով՝ փորձեր կարվեն կայքի բարելավման ուղղությամբ:

Նոր օրենսդրական ակտերը և անհրաժեշտ տեղեկատվությունը ժամանակին ստանալու համար համայնքապետարանը օգտվում է իրավական տեղեկատվական ծառայություններից:

Համայնքապետարանում ներդրվել է նաև տեղեկատվական ավտոմատացված համակարգ, որի օգնությամբ մարզպետարանի հետ գործում է էլեկտրոնային նամակագրություն:

Բնակարանային և կոմունալ տնտեսություն

Համայնքի բնակելի ֆոնդը կազմում է 85 առանձնատուն, որոնք սեփական միջոցներով կառուցված բնակելի տներ են: Ավան թաղամասը հիմնվել է 1980-ականների սկզբներին: Թաղամասում ավելի քան 9 տան շինարարություն գտնվում է տարբեր աստիճանի անավարտ վիճակում:

Համայնքի գազաֆիկացման ցանցի վերագործարկման աշխատանքներն սկսվել են 2000 թվականից և շարունակվում են մինչև օրս: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ գազաֆիկացված է համայնքի մոտ 73 տնտեսություն, այդ թվում՝ հին գյուղատեղի 39 %-ը, իսկ նոր գյուղատեղը՝ Ավան թաղամասը և Բազմաբնակարան եռահարկ 2 շենքերը ամբողջությամբ գազաֆիկացված չեն: Բազմաբնակարան այդ երկու շենքն ունի նաև տանիքների վերանորոգման և մուտքերի դռների տեղադրման խնդիր:

Համայնքի ճանապարհները, բացի 1-ին և 2-րդ փողոցներից, ասֆալտապատված չեն: 2018 թվականին համայնքի որոշ փողոցներ հարթեցվել են, ապա խճապատվել:

Ըստ գլխավոր հատակագծի՝ համայնքում նախատեսվում է կառուցել մանկապարտեզ: Վերոհիշյալ ծրագրի իրականացումը կխթաներ համայնքի զարգացումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Սակայն այն պահանջում է զգալի կապիտալ ներդրումներ, որը համայնքի բյուջեի միջոցներով անհնար է իրականացնել:

Համայնքի փողոցներն ապահովված են փողոցային լուսավորման համակարգերով, բացի Ավան թաղամասի 2 փողոցից: Երեկոյան և գիշերային ժամերին փողոցներով երթևեկելը և՛ բնակիչների, և՛ վարորդների համար առավել անվտանգ է և ապահով:

Նախորդ տարիներին մեծ աշխատանքներ են կատարվել ջրամատակարարման ասպարեզում. իրականացվել են ջրամատակարարման ներքին ցանցի որոշ հատվածների վերանորոգման աշխատանքներ: Արդյունքում՝ ջրամատակարարումը շուրջօրյա է, այն իրականացնում է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ն:

Ջրահեռացման կենտրոնացված համակարգը ընդգրկում է համայնքի տարածքի մի մասը: Կոյուղագծերը քայքայված են, հաճախ առաջանում են խնդիրներ: 2018 թվականին որոշ աշխատանքներ այդ ուղղությամբ կատարվել են, սակայն այն բավարար չէ կոյուղու խողովակների՝ խցանումներից խուսափելու և կոյուղաջրերի անարգել մաքրման համար:

Բնության և շրջակա միջավայրի պահպանություն

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կենսագործունեության ամենասահմանափակ գործոնն է, որի հետևանքով էլ համայնքի առջև ծառայած կարևորագույն խնդիրներից մեկը ազգաբնակչության կենցաղային աղբի տեղափոխման և համայնքի տարածքի մաքրության հարցն է:

Համայնքը չունի անտառային գոտի, սակավ են կանաչապատ տարածքները, բացակայում են այգիներն ու պուրակները, որի հետևանքով առավել կարևոր է դառնում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների հավուր պատշաճի կազմակերպումը:

Այս ծրագրում իրականացվող գործառույթները հետևյալն են.

- ✓ ավելացնել փողոցների սանիտարական մաքրման և աղբահանության ծավալները,
- ✓ իրականացնել կանաչապատման աշխատանքներ,
- ✓ աջակցել շրջակա միջավայրի առողջացմանը և մաքրության ապահովմանը,
- ✓ ապահովել գերեզմանատան տարածքի մաքրումը:

Բնակչության կենցաղային աղբի հեռացումը և համայնքի տարածքի աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպումը այսօր բավարար հիմքերի վրա է: Այն իրականացվում է Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի միջոցներով՝ համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված սխեմայի և ժամանակացույցի:

Առաջիկա տարիներին նախատեսվում է ավելացնել աղբահանության ծավալները, համայնքի բնակչությանը ներգրավել բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում, բնակչության շրջանում աշխատանքներ տանել՝ շրջակա միջավայրի մաքրության պահպանման ուղղությամբ, բարելավել ծառայությունների մատուցման որակը:

Համայնքապետարանը նախատեսում է իրականացնել որոշակի ծրագրեր կանաչապատման ուղղությամբ: 2018 թվականի նոյեմբերին կազմակերպվել է ծառատունկ համայնքապետարանի շրջակայքում: Նախատեսվում է ավելացնել համայնքի կանաչապատ տարածքները, բարեկարգել փողոցները և բակային տարածքները:

Բնության և շրջակա միջավայրի պահպանության կարևորագույն գործոններից մեկը կոյուղաջրերի հեռացման համակարգերի կանոնավոր գործունեությունն է: Նախատեսվում է այդ աշխատանքները իրականացնել շարունակական ծրագրով: Սակայն այս ծրագրի իրականացումը բացառապես համայնքի բյուջեի միջոցների հաշվին կատարելը իրատեսական չէ: Անհրաժեշտ է ուսումնասիրել ներդրումային դաշտը, որոնել և գտնել շահագրգիռ անձանց և կազմակերպությունների, համագործակցել նրանց հետ: Ծրագրին աջակցելու, որոշակի ներդրումներ կատարելու դեպքում ամբողջ ծավալով ծրագրի իրագործումը կհամարվի իրատեսական:

Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ

Համայնքը շատ մոտ է գտնվում Էջմիածին քաղաքին, և համայնքի բնակիչները հիմնականում օգտվում են Էջմիածին – Աշտարակ, Էջմիածին – Այգեշատ տրանսպորտի միջոցներից՝ ավտոբուս, միկրոավտոբուս, որոնք անցնում են հարևան Շահումյան գյուղի միջով:

Համայնքի բնակչության մոտ 92%-ն ապահովված է բջջային հեռախոսակապով: Համայնքում գործում են <<Բիլայն>>, <<ՎիվաՍել>>, <<Յուբոմ>> բջջային ցանցերը, կա ինտերնետ կապ: Բնակչությունը հնարավորություն ունի դիտելու ավելի քան 20 հեռուստաալիք:

Համայնքի բնակիչներն օգտվում են Շահումյան գյուղի կանոնավոր գործող փոստատանից:

Համայնքի ճանապարհները գրունտային են, խճապատված:

2014-2018 թվականներին իրականացվել են համայնքի փողոցների բարեկարգման և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որի արդյունքում ճանապարհների փոսերը լցվել են խճաքարերով: Ճանապարհների հետ կապված խնդիրներ կան Ավան թաղամասում: Այդ թաղամասում ճանապարհային տնտեսության ոլորտում դեռևս չեն իրականացվել ներդրումներ: Նշված աշխատանքները պահանջում են զգալի ֆինանսական ներդրումներ, որոնք համայնքի բյուջեի միջոցների հաշվին անհնար է իրականացնել:

Նախատեսվում է հնգամյա ծրագրի ընթացքում որոնել դոնոր կազմակերպություններ, հնարավորության դեպքում օգտվել սոցիալական ներդրումային ծրագրերից և այդ թաղամասում ևս իրականացնել նախատեսված ծրագրեր:

Կրթություն

Շահումյանի թ/Ֆ համայնքը չունի դպրոց: Համայնքի երեխաների մեծ մասը հաճախում է հարևան՝ Շահումյան գյուղի միջնակարգ դպրոց, մի մասն էլ՝ Էջմիածին քաղաքի տարբեր դպրոցներ: Քանի որ համայնքը շատ մոտ է Շահումյան գյուղին, չկա բաժանող հեռավորություն, ուստի այն դժվարություն չի առաջացնում բնակիչների համար: Շահումյան համայնքում գործող կրթական հաստատությունները՝ դպրոցը և դպրոցին կից գործող նախակրթարանը, մշտապես գտնվում են Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում: Համայնքապետարանի կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր՝ խթանելու կրթության մակարդակը, օժանդակելու կրթօջախի առջև ծառայած խնդիրների լուծմանը:

Համայնքը չունի մանկապարտեզ: Համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ 2011 թվականի սեպտեմբեր ամսից Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի աջակցությամբ Շահումյանի միջնակարգ դպրոցում գործում է նախակրթարան, որտեղ ընդգրկված են նաև համայնքի 5 տարեկան երեխաները: Սակայն այս ծրագրի իրագործումը չի նվազեցնում համայնքում մանկապարտեզ կառուցելու անհրաժեշտությունը, որն առանց նպատակային հատկացումների գրեթե անհնար է իրագործել: Այն իրագործելու համար անհրաժեշտ է միավորել համայնքի բնակիչների, շահագրգիռ կազմակերպությունների ուժերը, բնակչության շրջանում տանել բացատրական աշխատանք՝ աջակցելու և սատարելու ծրագրի իրականացմանը:

Հանգիստ, մշակույթ, սպորտ

Համայնքը չունի մշակույթի տուն, մարզահրապարակներ, արտադպրոցական կրթական հաստատություններ: Այդ պատճառով երիտասարդությունը զրկվում է իր ակտիվ հանգիստը կազմակերպելու հնարավորությունից:

Ֆուտբոլային խաղերը կազմակերպվում են դպրոցի մարզահրապարակում, կեսօրից հետո:

Համայնքում կազմակերպվում են հիշատակի և տոն օրերին նվիրված միջոցառումներ: Նախատեսվում է առաջիկայում ևս շարունակել այս աշխատանքները՝ հնարավորինս շատ մասնակիցներ ընդգրկելով իրականացվող ծրագրերում:

Շենքային պայմաններ չունի նաև գրադարանը: Այն գործում է համայնքապետարանի շենքում: Համայնքի դպրոցահասակ երեխաները օգտվում են և՛ համայնքի, և՛ դպրոցում գործող գրադարանից:

Համայնքի բնակիչների հանգիստն ապահովելու հարցում խթան կհանդիսանար խաղահրապարակների առկայությունը, բակային տարածքների կանաչապատումը:

Մշակութային և արտադպրոցական կրթական հաստատությունների առկայությունը կխթաներ համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական, կրթական, ֆիզիկական զարգացման գործում: Սակայն համայնքի բյուջեի միջոցների հաշվին այս ծրագրի իրագործումը անհնար է: Նախատեսվում են որպես ֆինանսավորման աղբյուրներ օգտագործել սոցիալական հիմնադրամների միջոցները:

Առողջապահություն

Համայնքի վարչական տարածքում գործող միակ առողջապահական հիմնարկը բուժկետն է, որը գործում է Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի շենքում: Տարածքը վերանորոգվել և շահագործման է հանձնվել 2011 թվականի գարնանը Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի և «Փրկենք երեխաներին» կազմակերպության համատեղ միջոցների հաշվին: Շենքը կահավորված է առաջին բուժօգնության անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

Համայնքապետարանի կողմից անընդմեջ աջակցություն և վերահսկողություն է իրականացվում, որպեսզի պատշաճ մակարդակով կազմակերպվի համայնքի բնակչության բժշկական սպասարկումը:

Առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում առևտրի օբյեկտների ընդհանուր թիվը՝ 1, այդ թվում՝ առևտրի փոքր օբյեկտներ՝ 1:

Հիմնախնդիրներ՝ տեղեկատվական սարքավորումների բացակայություն:

Էներգամատակարարում

Շահումյանի թ/Ֆ համայնքի էներգահամակարգը կառավարվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության կողմից:

Գազամատակարարում

Շահումյանի թ/Ֆ համայնքի գազամատակարարումը իրականացվում է «Գազարմ-Արմենիա» ընկերության կողմից:

Արտաքին լուսավորություն

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Շահումյանի թ/Ֆ համայնքի լուսավորվող փողոցների թիվը 6-ն է: Փողոցների հենասյունների վրա տեղադրվել են լուսատուներ:

Հիմնախնդիրներ՝ անհրաժեշտ է շարունակել արտաքին լուսավորության համակարգի կառուցման աշխատանքները՝ հետագայում ընդգրկելով նաև Ավան թաղամասի մնացած 2 փողոցները:

Աղետների ռիսկի կառավարում

Համայնքում աղետների բնածին և տեխնածին որակի ոլորտը մինչև վերջերս տարերային բնույթ է կրել: Ներկայումս այն ձևավորման փուլում է: Համայնքի տարածքը սեյսմիկ տեսակետից ակտիվ չէ: Բնական վտանգավոր երևույթներ՝ սելավներ, հեղեղումներ առկա չեն: Ուժեղ քամիներն ու կարկտահարությունը երբեմն համայնքին վնաս են հասցնում:

2.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքի հիմնախնդիրների ցանկը երկար է: Սակայն հնգամյա ժամանակահատվածում կարելի է առանձնացնել նրանք, որոնց լուծումն իրատեսական է՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և սահմանված հիմնական նպատակներից:

Համայնքում համայնքապետարանի կողմից առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ծրագրերի իրականացում.

1. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:
2. Համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի աշխատանքների ավարտ:
3. Ոռոգման ջրագծերի մասնակի վերանորոգում:
4. Ջրահեռացման համակարգի վերանորոգում:
5. Մանկական խաղահրապարակների կառուցում:
6. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում, մուտքերի դռների տեղադրում:
7. Համայնքապետարանի շենքի ընթացիկ նորոգում:
8. Մարզական խմբակների խաղասենյակների կապիտալ վերանորոգում:

Ծրագիր 1. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքի գյուղամիջյան փողոցները գրունտային են:

Սույն ծրագրով նախատեսվում է շարունակել իրականացնել փոսալցումներ, խճապատում և հարթեցում բոլոր ներհամայնքային փողոցներում՝ հետագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքներ:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

- Վերացնել փողոցների ջրափոսերը:
- Ապահովել երթևեկության բավարար պայմաններ տրանսպորտային բոլոր միջոցների և հետիոտների համար:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- Ուսումնասիրել այն փողոցների ցանկը, որտեղ անհրաժեշտ է իրականացնել բարեկարգման աշխատանքներ և ըստ առաջնահերթության հաստատել այն:
- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

Ծրագրից սպասվող արդյունքները

Ծրագիրն իրականացնելը հնարավորություն կտա համայնքի փողոցները բերել բարեկարգ տեսքի, երթևեկության համար ստեղծել բավարար պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական հաշվարկներով ծրագրի իրականացման համար կպահանջվի տարեկան մոտ 990.0 հազ. դրամ: Ուստի նպատակահարմար է փողոցների բարեկարգումը կատարել միայն համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Ծրագիր 2. Համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի աշխատանքների ավարտ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Անհրաժեշտ է շարունակել արտաքին լուսավորության համակարգի կառուցման աշխատանքները՝ հետագայում ընդգրկելով նաև Ավան թաղամասի մնացած երկու փողոցները:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

- Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- Ուսումնասիրել և ճշտել այն փողոցների ցանկը, որտեղ առաջնահերթ պետք է իրականացնել ծրագիրը:
- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը և շարունակելով լուսավորման համակարգի կառուցման և դրանց սպասարկման աշխատանքները՝ հնգամյա ծրագրի ավարտին համայնքի բոլոր փողոցները կլինեն լուսավորված, կբարելավվեն բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով 0.6 կմ երկարությամբ փողոցների արտաքին լուսավորության անցկացման աշխատանքների արժեքը տարեկան կկազմի մոտ 200.0 հազ. դրամ:

Ծրագիր 3. Ոռոգման ջրագծերի մասնակի վերանորոգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագրի առաջնահերթության հիմնավորումը բացատրվում է նրանով, որ գյուղի ոռոգման ջրագծերը մոտ 40 տարվա վաղեմություն ունեն, մաշված են և վերանորոգման կարիք ունեն:

Ջուրն ունենում է անտեղի կորուստ, խաթարվում են հողատարածքները ժամանակին և անխափան ոռոգելու աշխատանքները:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

- Վերացնել ջրագծերի մաշվածությունից առաջացած ջրի կորուստները:
- Օժանդակել բնակչությանը՝ ժամանակին կազմակերպելու ոռոգման աշխատանքները:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- Մշակել համայնքի վնասված ջրագծերի առանձին հատվածների նախագծերը և ըստ առաջնահերթության հաստատել այն:
- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

Ծրագրից սպասվող արդյունքները

Ծրագիրն իրականացնելը հնարավորություն կտա հողատարածքները ոռոգելու համար ստեղծել բավարար պայմաններ, նվազեցնել ոռոգման ջրի կորուստները:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով ջրագծերի մասնակի վերանորոգման աշխատանքների արժեքը տարեկան կազմում է մոտ 970.0 հազ. դրամ:

Ծրագիր 4. Ջրահեռացման /կոյուղու/ համակարգի մասնակի վերանորոգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագրի առաջնահերթության հիմնավորումը բացատրվում է նրանով, որ գյուղի որոշ բնակելի թաղամասերում խաթարված է կենտրոնացված կոյուղագծի համակարգը, բնակիչները օգտագործում են տնամերձ հողամասերում կառուցված կոյուղահորերը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

- Կանխել շրջակա միջավայրի աղտոտումը և բարելավել բնակչության կենցաղային պայմանները:
- Նախատեսվում է մշակել համայնքի կոյուղագծի առանձին հատվածների նախագծերը և շարունակական ծրագրով այդ աշխատանքներն իրականացնել՝ յուրաքանչյուր տարի իրագործելով առավել մեծ ծավալներ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
- Ուսումնասիրել ներդրումային դաշտը:
- Կազմակերպել գնումների գործընթաց, կնքել պայմանագրեր շինարարական աշխատանքների կատարման և այդ աշխատանքների իրականացման ընթացքում հսկողության վերաբերյալ:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ հնգամյա ծրագրի ավարտին կարելի կլինի առավելապես ապահովել բնակչության՝ ջրահեռացման համակարգերից օգտվելու հնարավորությունը, կբարելավվի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախատեսվում է հնգամյա ծրագրի շրջանակներում համայնքի բյուջեի միջոցների հաշվին կազմակերպել ջրահեռացման համակարգերի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների գնման գործընթացը:

Ներդրումային ծրագրերի առկայության դեպքում համայնքապետարանը կաջակցի ծրագրի իրականացմանը:

Ծրագիր 5. Մանկական խաղահրապարակների կառուցում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագիրը նախատեսում է կազմակերպելու համայնքի երեխաների հանգիստը, խաղային ատրակցիոններ տեղադրելու ծառայությունները:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

- Համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ազատ ժամանցի կազմակերպումը, շփումը այլ երեխաների հետ, ֆիզիկական դաստիարակությունն ու առողջության պահպանումը:
- Հարմար տարածքների ընտրությունը, կանաչապատումը, պահպանումը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
- Ընտրել տարածքները, կանաչապատել և կազմակերպել խաղային տարբեր ատրակցիոնների գնումն ու տեղադրումը:
- Ծրագիրն իրականացնել 2019 թվականի ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ համայնքի երեխաներն իրենց ազատ ժամանակը կանցկացնեն մաքուր օդում խաղալով, շփվելով հասակակից այլ երեխաների ու բնության հետ, որը կօժանդակի նրանց ֆիզիկական դաստիարակությանը և առողջության ամրապնդմանը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով խաղահրապարակի կառուցման, կանաչապատման և կահավորման համար տարեկան անհրաժեշտ է 600.0 հազ. դրամ:

Ծրագիր 6 . Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում, մուտքերի դռների տեղադրում:

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքները վատթար վիճակում են: Շենքերի վերին հարկերը խոնավ են, առկա են կաթոցներ: Մուտքերի դռների բացակայությունը, հատկապես ձմռան ամիսներին, խանգարում է բնակարաններում համապատասխան ջերմաստիճան ապահովելուն:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

- Ապահովել բավարար կենցաղային պայմաններ բազմաբնակարան շենքերի բնակիչների համար:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
- Համապատասխան ֆինանսական միջոցների հայթայթում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ապահովել կենցաղային անհրաժեշտ պայմաններ՝ բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու համար:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագիրն իրականացնելու համար տարեկան կպահանջվի 800.0 հազ դրամ:

Ծրագիր 7. Համայնքապետարանի շենքի ընթացիկ նորոգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագիրը նախատեսում է համայնքապետարանի շենքի տանիքի հիմնանորոգման, աշխատասենյակների հատակների նորոգման, ինչպես նաև ներքին հարդարման աշխատանքների իրականացումը:

Համայնքապետարանի շենքը շահագործման օրվանից ի վեր չի վերանորոգվել:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

- Համայնքապետարանում բնականոն և բարեկեցիկ աշխատանքային պայմանների ապահովում:
- Աշխատանքների իրականացման համար այնպիսի ժամանակահատվածի ընտրություն, որ չխաթարի համայնքապետարանի աշխատանքային բնականոն գործունեությունը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
- Աշխատանքները կազմակերպել հաջորդաբար՝ չխախտելով աշխատանքային գործառույթների իրականացումը:
- Ծրագիրն իրականացնել 2019-2023 թվականների ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ կբարելավվի համայնքի բնակչության սպասարկումը, համայնքապետարանի աշխատակազմի համար կապահովվի բարեկարգ միջավայրում աշխատանքների կազմակերպումը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով տարեկան կպահանջվի 990.0 հազ. դրամ:

Ծրագրի իրականացումը բացառապես համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրատեսական չէ: Ներդրումային ծրագրերի, շահագրգիռ անձանց և կազմակերպությունների կողմից ներդրումներ կատարելու դեպքում համայնքապետարանը կհամագործակցի նրանց հետ:

Ծրագիր 8. Մարզական խմբակների համար խաղասենյակների վերանորոգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագիրը նախատեսում է համայնքապետարանի շենքին կից շենքի տանիքի հիմնանորոգում, արտադպրոցական խմբակների համար խաղասենյակների կառուցում, ինչպես նաև ներքին հարդարման աշխատանքների իրականացում:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

- Աջակցություն համայնքի երիտասարդների և դպրոցահասակ երեխաների մշակութային և ֆիզիկական դաստիարակությանը, ազատ ժամանցի կազմակերպմանը, որ չխաթարի համայնքապետարանի աշխատանքային բնականոն գործունեությունը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
- Աշխատանքները կազմակերպել հաջորդաբար՝ չխախտելով աշխատանքային գործառույթների իրականացումը:
- Ծրագիրն իրականացնել 2019-2023 թվականների ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ կբարելավվի համայնքի բնակչության ազատ ժամանցի կազմակերպումը, երեխաներն ընդգրկված կլինեն խմբակներում:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով տարեկան կպահանջվի 990.0 հազ. դրամ:

2.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի մուտքերը հիմնականում ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը /2019 թվական՝ 92,3% , 2020 թվական՝ 92,4%, 2021 թվական՝ 92,3%, 2022 թվական՝ 92,4%, 2023 թվական՝ 92,6 %/ ձևավորվում են պետական բյուջեից համայնքին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին /աղյուսակ 4/:

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր քիչ են կանխատեսվում, ապա ծրագրավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծ մասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

